ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 06

Լերմոնտովո համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 14-ի նիստի.

գ. Լերմոնտովո Համայնքի ղեկավարի աշխատասենյակ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Էդիկ Համբարձումի Չախալյանը

Մասնակցում էին՝

Համայնքի ավագանու անդամներ՝ Բոլոտին Իվանը, Քրիստինե Խառատյանը, Վասիլի Կորոլյովը; համայնքապետարանի աշխատակիցները:

ՆԻՍՏԸ - Էդիկ Չախալյանը ժամը 11:00-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստը վարողն առաջարկեց հաստատել օրակարգը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0 ընդունվեց որոշում:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը /N23/՝

1.Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը աճուրդ վաճառքով օտարելու մասին

զեկ. Ա.Գալուստյան

2.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալությամբ տրամադրելու մասին

զեկ. Ա.Գալուստյան

3.ԼՄ Լերմոնտովո համայնքի 2024 թ-ի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին

զեկ. Մ.Բոլոտինա

ԸՆԹԱՑՔԸ՝

1. **<u>ԼՍԵՑԻՆ</u>** - Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը աճուրդ վաճառքով օտարելու մասին նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Արտյոմ Գալուստյանը:

Նա ներկայացրեց հողամասը, որոնք ենթակա են օտարման: Սահմանվեցին հողամասերի մեկնարկային գները, մասնակցության վճարը և նախավճարի չափը:

Քվեարկությամբ, կողմ՝ 3, ընդունվեց որոշում: /N24/

2. **ԼՍԵՑԻՆ** - Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը վարձակալությամբ տրամադրելու մասին նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Արտյոմ Գալուստյանը:
Նա ներկայացրեց հողամասը, որը վարձակալությամբ պետք է տրամադրվի 25 տարի ժամկետով: Սահմանվեց մեկնարկային գինը, մասնակցության վճարը: Համայնքի ղեկավարին առաջարկվեց ապահովել համապատասխան գործընթացը:

Քվեարկությամբ, կողմ՝ 3, ընդունվեց որոշում: /N25/

3. **ԼՍԵՑԻՆ** - Լերմոնտովո համայնքի 2024 թ-ի երրորդ եռամսյակի կատարման մասին նախագիծը

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ Մարիյա Բոլոտինան: Նա ներկայացրեց, որ Լերմոնտովո համայնքի 2024 թ-ի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին հաշվետվությունը: համառոտ ներկայացվեցին կատարված աշխատանքները: Պատասխանեց ավագանու անդամներին հուզող հարցերին: Դրանից հետո նիստը վարողն առաջարկեց քվեարկել:

Քվեարկությամբ, կողմ՝ 3, ընդունվեց որոշում: /N26/

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

1.ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ

2.ԽԱՌԱՏՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

3.ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ